

15/05/2007
համար 138 Ն

**«ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԼԻՑԵՆԶԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 10-Ը ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Սույն կանոնակարգում ներառված է ՀՀ ԿԲ խորհրդի
18.09.07թ. թիվ 296 Ն, 16.11.07թ. թիվ 363 Ն, 15.01.08թ. թիվ 11 Ն, 12.02.08թ. թիվ 43 Ն,
25.03.08թ. թիվ 80Ն, 30.03.09թ. թիվ 67-Ն, 08.09.09թ. թիվ 266-Ն, 01.12.09թ. թիվ 359-Ն
որոշմամբ կատարված փոփոխությունները

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» ենթակետը, 49-րդ
հոդվածի 1-ին կետը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է .

1. Հաստատել «Արտարժույթի առուվաճառքի գործառնությունների
լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը՝ համաձայն հավելվածի
(կցվում է):

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի խորհրդի 2006 թվականի հունիսի 6-ի «Արտարժույթի առք ու վաճառքի
գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ը նոր
խմբագրությամբ հաստատելու մասին» թիվ 238Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան
հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

S. Սարգսյան